



# ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀՌԶԱԿԱԳԻՐ «ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲՆԱԿԱՊԱՅՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»

**Մենք՝ Սոցիալական բնակապահովման բնագավառում համագործակցության եվրոպական հանձնախումբը (Housing Europe), «Չարգացման հետազոտություններ բնակարանաշինության, բնակապահովման և սոցիալական նորարարության խթանման համար» (Developpement Etudes pour le Logement, la Promotion de l’Habitat, l’Innovation et le Social, DELPHIS) կազմակերպությունը, Կենվորների միջազգային միությունը (International Union of Tenants) և Եվրոպական Պատասխանատու Բնակապահովման Նախաձեռնության շահագրգիռ կողմերի ֆորումի (ERHIN Stakeholder Forum) անդամները (ստորև թվարկված), 2014 թ. հոկտեմբերի 6-ին հավաքվեցին Բրյուսելում՝ հաստատելու մեր հանձնառությունը՝ աշխատել միասին, որպեսզի խթանենք Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ) սոցիալական կամ մատչելի բնակարաններով ապահովման ոլորտում՝ հասարակությանն առավելագույնս օգուտ տալու նպատակով:**

Ոլորտն իր ավանդյալ է բերում «Եվրոպա 2020»՝ ողջամիտ, կայուն և համակողմանի աճի նպատակին հասնելու գործում: Միաժամանակ, հետզհետե աճում է մատչելի բնակարանային կարիքը եվրոպական երկրներում, և կա ներդրումների հարածուն անհրաժեշտություն, հատկապես աճող ու զարգացող քաղաքային տարածքներում: Բազմազան պահանջմունքների բավարարման համար պետք է բնակարանների տիրապետման տարբեր ձևեր սատարվեն տիրապետման չեզոք բնակարանային քաղաքականության միջոցով, ներառյալ վարձակալական և կոոպերատիվ բնակարաններով ապահովումը:

Բախվելով անընդհատ ավելացող տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրների՝ բնակարանային ոլորտը նշանակալի ձևափոխության է ենթարկվում Եվրոպայով մեկ: Բոլոր բնակարանային ծառայություններ մատուցողները ստիպված են ավելի զարգացնել, հարմարեցնել կամ նույնիսկ փոխել իրենց գործարար գործելակերպերը, որպեսզի դիմակայեն ներկա և ապագա մարտահրավերներին: Սոցիալական և մատչելի բնակապահովում տրամադրողները հատուկ պատասխանատվություն ունեն ամբողջ հասարակության առաջ:

**Ավելի, քան երբևէ, ներկայիս բարդ մարտահրավերները բնակարանային ծառայություններ մատուցողներից և նրանց շահառուներից պահանջում են սերտորեն համագործակցել, Պատասխանատու բնակապահովումը պահպանելու և Է՛լ ավելի զարգացնելու համար:** Պատասխանատու բնակապահովումը՝ դա արդար ու բարոյական բնակարանային շինարարության և կառավարման մի ձև է, որը բարելավում է տեղական համայնքների տնտեսական ու սոցիալական պայմանները: Պատասխանատու բնակապահովումը հիմք է ստեղծում սոցիալական համախմբվածության, տեղական զարգացման և գրավչության, կենվորների կամ բնակիչների և տեղական սուբյեկտների կյանքի որակի համար՝ այդպիսով առավելագույնի հասցնելով երկարաժամկետ ընդհանուր արժեքները:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը կարող է հզոր միջոց լինել այս անցմանը նպաստելու համար և մատակարարներին օգնել լուծել ընթացիկ և հետագա հիմնախնդիրները: Մասնավորապես, այն կարող է նպաստել սոցիալական բնակարանային ծառայություններ մատուցողների և տարբեր շահագրգիռ կողմերի (ներառյալ կենվորների և նրանց ներկայացուցիչների) միջև հարաբերությունների ու համագործակցության որակի և այն միջոցների բարելավմանը, որոնցով նրանք միասին աշխատում են իրենց ընդհանուր նպատակներին հասնելու համար: ԿՍՊ-ն հիմնված է ռազմավարական հանձնառության վրա և բերում է հավասարակշռված հարաբերությունների զարգացում՝ առաջնորդվելով հստակ ու թափանցիկ նպատակներով, համապատասխան գործառնություններով ու պարտականություններով՝ հօգուտ բոլոր գործընկերների:

Ջետևարար, ներքոստորագրյալ կողմերը համաձայն են հետևյալի վերաբերյալ.

1) Մեր պատկերացմամբ՝ սոցիալական և մատչելի բնակապահովման բնագավառում ԿՍՊ-ն նպաստում է՝

- ▶ **տնտեսական պատասխանատվությանն ու կայունությանը՝** բնակարանային ծրագրերի մեջ կատարվող կայուն ներդրումների և համայնքների, ֆինանսավորման այլընտրանքային կամ նոր աղբյուրների որոնման, պատասխանատու և արդյունավետ գնումների գործելակերպերի, տեղական իշխանության մարմինների և էներգամատակարարների, բնակիչների համար չափավոր բնակարանային ծախսերի միջոցով.
- ▶ **-տեղական սոցիալական կայունությանը՝** հիմնվելով, մասնավորապես, բնակարանների որակի ու մատչելիության վրա, հաշվի առնելով ծառայությունների մոտիկությունը, անշարժ գույքի տիրապետման անվտանգությունը, սոցիալական կազմի, սոցիալական ինտեգրման և համայնքների կայունության խթանման անհրաժեշտությունը.
- ▶ **շրջակա միջավայրի և բնական պաշարների պահպանմանը՝** հիմնվելով, մասնավորապես, էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումների, կանաչ ենթակառուցվածքների և կանաչ տարածքների վրա.
- ▶ **արդյունավետ կառավարմանը և շահագրգիռ կողմերի հետ արդար հարաբերություններին՝** կատարելագործված կառավարման և գործարար վարվելակերպի, թափանցիկության և հաշվետվության, շահագրգիռ կողմերի երկխոսության և ներգրավվածության, կենվորների ինստիտուցիոնալ ու կառուցվածքային մասնակցության ուժեղացման միջոցով.

**մարդկային ռեսուրսների պատասխանատու կառավարմանը՝** տրամադրելով հավասար հնարավորություններ և աշխատանքի արդար պայմաններ, նպաստելով աշխատանքի և ընտանեկան կյանքի համատեղմանը, ստեղծելով լավ աշխատանքային պայմաններ և աշխատակազմին տալով վերապատրաստման հնարավորություններ:

2) ԿՍՊ-ի սկզբունքները պետք է լինեն Պատասխանատու բնակապահովում տրամադրողների ԴՆԹ-ում, որը նկարագրում է, թե ինչ և ինչպես են նրանք անում: Մենք պաշտպանում ենք ԿՍՊ-ի տարածումը սոցիալական և մատչելի բնակապահովման սեկտորի և մեր գործունեության ու աշխատանքային ոլորտների մեջ: Մենք խրախուսելու ենք բնակարանային ծառայություններից օգտվող տարբեր շահառուների միջև գործընկերությունների հաստատումը ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում:

3) Պատասխանատու բնակապահովման մեջ ներդրում կատարելը նշանակում է ընդհանուր արժեքներ և տնտեսական ու սոցիալական հասունություն ստեղծել քաղաքացիների և համայնքների համար: Եվրամիության երկրները պետք է ստանձնեն երկարաժամկետ ֆինանսական պարտավորություններ, որպեսզի տրամադրեն հասանելի և մատչելի բնակապահովում: Ներքոստորագրյալ գործընկերները կպաշտպանեն ներդրումների ու ֆինանսական պարտավորությունների բոլոր ձևերը, որոնք նպաստում են Եվրոպական Միությունում ավելի կայուն ու մատչելի բնակարանային շուկայի ապահովմանը և հետագա զարգացմանը:

## Ստորագրող կողմեր՝



Housing Europe  
– on behalf of its members  
Marc Calon, President



City of Vienna  
Michael Ludwig, Housing Councillor




Confédération Nationale  
du Logement  
Eddie Jacquemart, President



Confederation of Family  
Organisations in the European Union  
Agnes Uhereczky, Director



DELPHIS  
Olivier Barry, President



Deutscher Mieterbund e.V.  
Lukas Siebenkotten, Director



International Union of Tenants  
Sven Bergenstrahle, President



Lejernes Lands Organisation  
Helene Toxvaerd, President



Nederlandse Woonbond  
Ronald Paping, Director



Royal Institution of  
Chartered Surveyors  
Peter Bolton King,  
Global Residential Director



SOLIDAR  
Conny Reuter, Secretary General

